

յաճուր. «Հոռովմէն ի Վենետիկ անցավ Տէրզցին և հոն ազգային վաճառականաց խնդիրքով «Սաղմոսարան» մը տպագրեց (1587) նորաձոյլ տառերով, որոնք առաջիններէն աւելի գեղեցկութիւն մը շունչէին իրենց ձևոցը և արուեստին մեջ»⁴: Եվ իսկապես Տերզնցու տպագրած Գրիգորյան տոմարը շատ ավելի հաջող ու գեղեցիկ տպագրութիւն է: Կարելի է ասել, որ Աբգար դպրի 1565 թ. տպագրած Սաղմոսարանն էլ, ինչպես և Հակոբ Մեղապարտի Վենետիկում տպագրած հինգ գրքերը շատ ավելի հաջող տպագրութիւններ են, քան Տերզնցու Սաղմոսարանը⁵:

Գ. Զարպհանալյանը մի հատված է բերում այս Սաղմոսարանի նկարի տակը զետեղված այդ հիշատակարանից: Դրանից, մենք իմանում ենք, որ գիրքը լույս է տեսել Վենետիկում, 1587 թվականին, Զուան Ալբերտի տպարանում. «... Աւարտեցաւ գիրքս ձեռամբ տէր Յովհաննէս Տէրզնցոյս և որդւոյ իմոյ Խաչատուրին ի թվին Ռևզ (1587) ի մայրաքաղաքն Վենետիկ ... ի բանատուն (պամատուն)»⁶ Զուան Ալբերթին. ձեռնատուր խոճալ... Զողեցոց...»: Գ. Զարպհանալյանը և մեր մյուս մատենագետները (Վ. Զարդարյան, Գ. Լևոնյան, Թեոդիկ) ոչ մի բան չեն ասում մեր նկատած հիշատակարանների մասին: Դժվար է ասել, թե նրանք այդ հիշատակարանները չեն նկատել, ինչպես և դժվար է ենթադրել, թե նրանք ավելորդ են համարել այդ կարևոր վկայութիւնները:

Այդ վերին աստիճանի ուշագրավ ու հազվագյուտ գիրքը առանձին խնամքով պահվում է Մատենադարանում, հնատիպ գրքերի հավաքածուի 1318 համարի տակ⁷:

4 Գ. Զարպհանալյան, Պատմութիւն հայերեն դպրութեան, հ. ք, Վենետիկ, 1878, էջ 281:

5 «Պարզատոմար», 1512, Աղթարք, 1513, Տաղարան, 1513, Ուրբաթագիրք, 1513 և պատարագատետր 1513:

6 Տպագրութեան սկզբնավորման ժամանակ տպարանը անվանվում էր բանատուն, պամատուն, գործարան տպագրութեան, իսկ տպագրել բառի փոխարեն գործ էին անում շինեցավ, ավարտեցավ, կազմեցավ, ի հայտ բերվեց և այլն:

7 Լոնդոնի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր ջովթակահար Մանոկ Բարիկյանից վերջերս ստացված տեղեկութեան համաձայն, այդ Սաղմոսարանից մեկ օրինակ պահպանվում է Բրիտանական թանգարանի գրադարանում: